DOI:10.56653/18290361-2024.14-53

Մարինե Հարոյան

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի գիտաշխատող
marineharoian@gmail.com

ԱՆԻՆ ԱՐԱՄ ԵՒ ԱՐՏԱՇԵՍ ՎՐՈՒՅՐՆԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆՈՒՄ*

Հիմնաբառեր. Արամ Վրույր, Արտաշես Վրույր, անձնական արխիվ, Անի, Անիի արշավախումբ, Ն. Մառ, Ն. Տոկարսկի:

Ներածություն

Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում են պահվում Արամ և Արտաշես Վրույրների անձնական արխիվները:

19-րդ դարավերջի կատակերգակներից՝ Արամ Վրույրի (Արամ Մաքասճյան, 1863-1924 թթ.) անունը հիմնականում կապում են թատերական արվեստի հետ: Բեմական գործունեությունը սկսել է 1882 թվականին, Թիֆլիսում: 1883-ից խաղացել է Գևորգ Չմշկյանի թիֆլիսյան թատերախմբում, որտեղ էլ կնքվել է նրա բեմական անունը՝ Արամ Վրույր: Նրան է պատկանում Պարոնյանին, որպես բեմական հեղինակ, հայտնագործելու պատիվը: Վրույրը առաջին անգամ բեմ է բարձրացրել Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբար»-ը (Թիֆլիս, 1895 թ.), ապա «Մեծապատիվ մուրացկանները» (1895 թ., բեմականացումը՝ Վրույրի և Ա. Սարդարյան-Արևշատյանի)՝ հանդես գալով գլխավոր դերերով: Հեղինակ է մի շարք բեմականացումների, թարգմանությունների, ինչպես և պիեսների: 1907-1913 թթ. խմբագրել և հրատարակել է «Հուշարար» հանդեսը: Եղել է Հայ գրողների կովկասյան ընկերության անդամ:

Հայտնի է, որ Արամ Վրույրը (1863-1924), բեմական գործունեությանը զուգընթաց, զբաղվել է նաև հնագիտական լուսանկարչությամբ: Նա եղել է լուսանկարիչ Հովհաննես Քյուրքչյանի աշակերտը և 1904-1917 թթ. մասնակցել է Ն. Մառի գլխավորած Անիի արշավախմբերի աշխատանքներին: Նրա անմիջական մասնակցությամբ են հայտնաբերվել Անիի Գրիգոր Լուսավորչի տաճարի (Գագկաշեն) ավերակները (1905 թ.):

Արամ Վրույրի ձեռագիր ժառանգությունը ԳԱԹ-ում

Արամ Վրույրի անձնական արխիվը թանգարանին է հանձնել ավագ որդին՝ Արա Վրույրը, 1933 թվականին: Արամ Վրույրի անձնական արխիվը ըստ փաստաթղթերի տեսակի բաղկացած է հետևյալ հինգ բաժիններից.

* Ստացվել է 25.06.2024, ուղարկվել է գրախոսման 29.06.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

1. Ձեռագիր նյութեր
2. Նամակներ, հեռագրեր
3. Անձնական փաստաթղթեր
4. Կարծիքներ, ազդագրեր, ծրագրեր
5. Լուսանկարներ, անձնական իրեր

Շուրջ 1200 միավոր կազմող այս հավաքածուի բոլոր բաժիններում կան Անիին վերաբերող բազմաթիվ տարաբնույթ անտիպ վավերագրեր, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն կտա Ն. Մառի գլխավորած Անիի արշավախմբերի վերաբերյալ նոր ճշգրտումների և բացահայտումների: Բերենք մեկ օրինակ՝ արխիվի ձեռագրերի բաժնում առկա Վրույրի Պաշտոնական կենսագրության մեջ նշվում է, որ 1904-1917 թթ. մասնակցել է Ն. Մառի գլխավորած Անիի արշավախմբերին, մինչդեռ նրա անձնական արխիվում պահվող ինքնագիր ինքնակենսագրության մեջ նշված է 1903 թվականը (Արամ Վրույր, Ինքնակենսագրություն, ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ,1 բաժին, թիվ 60, ինքնագիր, չհրատարակված):

Արխիվի ձեռագրային բաժնում պահվում են Վրույրի՝ Անիի մասին կարդացած դասախոսության ինքնագիրը և դասախոսության ծրագիրը (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 1-ին բաժին, թիվ 87, 86): Դասախոսությունը Անի քաղաքի ծագման մասին է, իսկ դասախոսության ծրագիրը՝ Անիի աշխարհագրական դիրքի մասին:

Այս ձեռագրերը մեկ անգամ ևս փաստում են, որ Արամ Վրույրը լուրջ հետաքրքրված էր հնագիտությամբ և լուսանկարչությանը զուգահեռ մասնակցում էր հնագիտական արշավախմբի աշխատանքներին: Հայտնի փաստ է նաև, որ Գագկաշենի փլատակների ճիշտ տեղը հուշել է Արամ Վրույրը, և պեղումները ցույց տվեցին, որ նա չէր սխալվել:

Արխիվի 4-րդ բաժնում պահպանվել է նաև Անիի մասին Կ. Պոլսում կարդացած այդ դասախոսությունների երկու ազդագիր (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 4-րդ բաժին, թիվ 37, 39): Հետաքրքիր է, որ դասախոսություններն ավելի ըմբռնելի և գրավիչ դարձնելու համար հեղինակը նաև մոգական լապտերով պատկերներ է ցույց տրվել:

Ձեռագրային բաժնում է պահվում է նաև Արամ Վրույրի՝ «ԱՆԻ» Պատմական – ողբերգական պատկերներ 4 գործողութեամբ պիեսը (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 1 բաժին, թիվ 3, ինքնագիր): Ցավոք, պիեսի ձեռագիրը թերի է, և դրա բեմադրման մասին որևէ տեղեկություն չունենք:

Արխիվի ձեռագրային բաժնում առկա է ևս մի շատ կարևոր վավերագիր. դա Անիի սևանկարների ռուսերեն լեզվով ցուցակն է՝ կրտսեր Վրույրի (Արտաշես) հետևյալ ծանոթագրությամբ. «Անիի բազմահարուստ արխիվը, որը գտնվում էր Պետերբուրգում 1918 թ. Պետերբուրգից Թիֆլիս փոխադրման ժամանակ, (մի ամբողջ վագոն), Հյուսիսային Կովկասում անհետ կորչում է: Ահա այդ բազմահարուստ արխիվից փշրանք» (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 1 բաժին, 85 չհրատարակված):

Անիի և Ն. Մառի գլխավորած Անիի արշավախմբերի մասին հետաքրքիր տեղեկություններ կարելի է գտնել նամակների բաժնում: Հիշարժան են հատկապես Արամ Վրույրին ուղղված Մառի նամակները և հեռագրերը՝ գրված հայերեն և ռու-

սերեն լեզուներով, 1906-1919 թթ. (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 2-րդ բաժին, թիվ 42-50, չհրատարակված): Դրանք հիմնականում Անիի վերաբերյալ իր կարդացած զեկուցումների և արշավախմբի աշխատանքների մասին են: Նամակներում հետաքրքիր մանրամասներ կան արշավախմբի աշխատանքների կազմակերպման դժվարությունների մասին: Նամակներից մեկում (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 2-րդ բաժին, 44, չհրատարակված) Մառը գրում է. «...Այս տարի դժբախտաբար շատ սուղ միջոցներով կը լինիմ Անիում, իսկ անելու գործ շատ է: Երկու գիւղ պեղելու, մէկը սկսուած, մէկը նոր, 2) Կարգի բերել նոր Մուզէն[1], որ պատրաստ է բայց ներքին կողմը էլի կըպահանջէ ծախսեր, 3) ինձ և աշխատակիցների համար նոր տուն շինել լուսանկարչական սենեակով հանդերձ և մինչև անգամ վանայով և պատշգամով, վերջին<ն> իմ սեփական հաշուով և հարիւր ուրիշ մանր ծախսեր, մախլաս...»:

Նամակներից զատ կա նաև Մառից ստացված 4 հեռագիր, որոնցից մեկը շնորհավորական հեռագիր է Վրույրի բեմական գործունեության 25 ամյա հոբելյանի առթիվ՝ ստորագրված «*Ամեցին շնորհավորում է Ամեցուն*» (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 3-րդ բաժին, 29, չհրատարակված):

Ցավոք, արխիվում բացակայում են Արամ Վրույրի նամակներն՝ ուղղված Մառին, հնարավոր է դրանք լինեն Մառի արխիվում, սակայն դրանցից մի քանիսը Վրույրի կենսագիր Ռոբերտ Փաշայանը հրապարակել է «Սովետական գրականություն» ամսագրում (Փաշայան 1971, 135-144):

Դրանք 1903-1916 թվականներին գրված նամակներ են և ամբողջապես Անիում ծավալած իր գործունեության մասին, որը ևս մեկ անգամ հաստատում է, որ Անիում իր աշխատանքները Վրույրը սկսել է, 1903 թվականից, ոչ թե 1904:

Արամ Վրույրին ուղղված նամակների մեջ է նաև որդու՝ Արտաշես Վրույրի 1916 թ. Շուշիից ուղարկած նամակ-բացիկը, որով նա հայտնում է Անիի լուսանկարչական պաշտոնը ստանձնելու մասին (Արտաշես Վրույր, 1916, Շուշի, ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 2-րդ բաժին թիվ 6, չհրատարակված): Տակավին ուսումնասիրված չեն Արամ Վրույրի նոթատետրային գրառումները, որոնց մեջ նույնպես հանդիպում ենք գրառումներ Անիի մասին (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 1):

Կարևոր տեղեկություններ են պարունակում նաև արխվում պահվող 1906-1916 թթ. վկայագրերը՝ տրված Արամ Վրույրին Ս. Պետերբուրգի Հնագիտական կոմիտեի, Կովկասի հնագիտական ընկերության, Կովկասյան բանակի շտաբի և Կարսի նահանգապետի կողմից՝ Անիում, Երևանի նահանգում, Ռուսական զորքերի զբաղեցրած տարածքներում լուսանկարելու և զենք կրելու իրավունքի մասին (ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ, 3-րդ բաժին, թիվ 64, 65, 66, 68, 73, 74,75, 76, 77 չհրատարակված): Այս վավերագրերը հնարավորություն են տալիս ճշտել Վրույրի հնագիտական լուսանկարների ոչ միայն աշխարհագրությունը, այլև հստակեցնել շատ լուսանկարների ստեղծման տարեթվերը:

1 Նկատի ունի Անիի թանգարանի շենքը:

Արտաշես Վրույրի ձեռագիր ժառանգությունը ԳԱԹ-ում

Արամ Վրույրի որդիները նույնպես մեծ ներդրում ունեն հնագիտության, հատկապես վավերագրական լուսանկարչության զարգացման գործում: Մեծ որդին՝ Արան (1896-1943), երիտասարդ տարիքից հոր հետ մասնակցել է գիտարշավներին, լուսանկարել Ջուղայի խաչքարերը: Հնագիտության և պատմական հուշարձանների վավերագրման բնագավառում առավել մեծ ներդրում ունի Արտաշես Վրույրը (1897-1987): Նա մասնակցել է Ն. Մառի, Հ. Օրբելու, Բ. Պիոտրովսկու, Ն. Տոկարսկու, Ս. Բարխուդարյանի գիտարշավներին: 1964 թ. հրատարակել է «Անիում» հուշագրությունը, որը հավելումներով վերահրատարակվել է 1979 թ: Արխիվը թանգարանին հանձնել է Արտաշես Վրույրը դեռևս իր կենդանության օրոք:

Արխիվը պարունակում է 800 միավոր վավերագիր, որոնց մեջ կան Անիին վերաբերող բազմաթիվ անտիպ վավերագրեր:

Հետաքրքիր է հատկապես հուշագրությունների բաժինը, որտեղ պահվում են Արամ Վրույրի («Հիշարժան ուսուցչիս՝ Արամ Վրույրին» ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ 49), Թորոս Թորամանյանի (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ 45 «Հուշեր Թորոս Թորամանյանի մասին» ինքնագիր, 7թ), և Հ. Օրբելու մասին Արտ. Վրույրի հուշերը (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ 48-48ա Հովսեփ Օրբելու մասին) [2]:

Ցավոք, չի պահպանվել «Անիում» հուշագրության ամբողջական ձեռագիրը, կան ընդամենը մի քանի գլուխների ինքնագրեր («Անիի մատյանը», ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 18)[3] («Հուշեր անցյալ օրերի. Վերադարձ» ինքնակենսագրական հուշ ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 47): Հոդվածներ բաժնում հոր՝ Արամ Վրույրի և Անիի արշավախմբի մասին իր գրած հոդվածն է (Արամ Վրույրի հնագիտական-լուսանկարչական աշխատանքների մասին 1978 թ., ինքնագիր, ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 15):

Չափազանց հետաքրքիր է Արտաշես Վրույրի նամակագրությունը Հ. Օրբելու (ԳԱԹ Արտ. Վրույրի արխիվ, թիվ 55), Ն. Մառի, Ն. Տոկարսկու, Կամիլա Տրեվերի և Անատոլի Յակոբսոնի հետ :

Հովսեփ Օրբելուն գրած նամակում (ԳԱԹ Արտ. Վրույրի արխիվ, թիվ 55) Վրույրը գրում է իրեն փոխանցված Հյուսյանի հիշողությունը՝ Կիսլովոդսկի կայարանում անբարեխիղճ վիճակում սևապակիների տուփեր տեսնելու մասին, ենթադրում է, որ դրանք եղել են Նիկողայոս Մառի պեղումների կորած սևապակիները:

Նիկոլայ Տոկարսկուն գրած երկու նամակներում (ԳԱԹ Արտ. Վրույրի արխիվ, թիվ 79,81, չհրատարակված) խոսվում է Տոկարսկու չափագրած Անիի քարայրների լուսանկարներն ուղարկելու, 1916-17 թթ. պեղումների սևապակիների մի մասը Անիում թողնելու, մի մասը՝ Թիֆլիսում Հ. Օրբելուն հանձնելու, Աշխարհբեկ

---

2 Պատրաստվել է Պետական Էրմիտաժի Արևելքի բաժնի կազմակերպած, Օրբելուն նվիրված գիտական նստաշրջանի համար, սևագիր, ջնջումներով, կից՝ ռուսերեն թարգմանությունը Արտ. Վրույրի ստորագրությամբ, 1971թ. , 4 թերթ:

3 «Անիում» գրքի գլուխներից է, վրան կա նշում «Կցել 102 էջից հետո նոր գլուխ», մեքենագրված էջերին կան ձեռագիր հավելումներ, ուղղումներ:

Քալանթարի՝ զինված խմբով Անիից էքսպոնատները դուրս բերելու և պատմության թանգարանին հանձնելու, ինչպես նաև թուրքերի վայրագությունների մասին:

Անիին վերաբերող արժեքավոր տեղեկություններ կան նաև Արտ. Վրույրին՝ Ն. Տոկարսկու գրած նամակներում (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 195-244, չհրատարակված): Օրինակ՝ նամակներից մեկում տեղեկություններ կան Դավիթ Կիպշիձեի Անիի մասին ձեռագիր աշխատությունը գտնելու մասին (ԳԱԹ, Արտ.Վրույրի ֆոնդ, թիվ 199, չհրատարակված), Անիում հնագիտական աշխատանքները շարունակելու համար թուրքերի մերժման (Արտ. Վրույրի ֆոնդ 202) մասին: Հետաքրքիր է, որ Տոկարսկին էլ է Արտ. Վրույրին ուղղված նամակները ստորագրում՝ Նիկոլայ Անեցի:

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում նաև արվեստաբան, պատմաբան Կամիլա Տրեվերի (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 247--252, չհրապարակված) և հնագետ, ճարտարապետության պատմաբան Անատոլի Յակոբսոնի նամակները (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 138-157, չհրապարակված) ուղղված Արտաշես Վրույրին:

Արտաշես Վրույրին ուղղված նամակներում կա ևս մի ուշագրավ նամակ (ԳԱԹ, Արտ. Վրույրի ֆոնդ, թիվ 179, չհրապարակված): Գրում է ոմն Վարդան (Վիկտոր) Վարդանյան Նյու-Յորքից, 12.11.1964 թվին: Նամակի հեղինակը գրում է, որ իրենք հանդիպել են 1914-ին կամ 1915-ին՝ Շուշիում, որտեղ միասին խաղացել են օպերետային ներկայացման մեջ, և Արտ. Վրույրը նրան հրավիրել է Անի: Նա 1916 թվականի ամռանը այցելում է Անի և պատմում այդ այցի մասին:

Այլ անձանց նյութերի բաժնում պահվում է Հ. Օրբելու նամակը Գաբրիելին, ում հետ աշխատել է Անիում, որտեղ Օրբելին կիսվում է իր ջերմ հուշերով:

Ամփոփում

Այսպիսով, կարող ենք փաստել, որ Արամ և Արտաշես Վրույրների անձնական արխիվներում առկա են Անիի և Ն. Մառի Անիի արշավախմբի մասին բազմաթիվ անտիպ նամակներ և այլ վավերագրեր, որոնց ուսումնասիրությունը կարևոր ներդրում կլինի Անիի պատմության, ճարտարապետության, մշակույթի ուսումնասիրության ասպարեզում:

Ձեռագիր ժառանգությունից զատ Գրականության և արվեստի թանգարանում պահվում են նաև Արամ, Արա և Արտաշես Վրույրների՝ պատմական հուշարձանների լուսանկարների մի մեծ հավաքածու, որտեղ կան Անիի հուշարձանների շուրջ 100 լուսանկարներ, որոնց մի մասը 2022 թվաւանի ցուցադրվեց Հայաստանի պատմության թանգարանում՝ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի հետ կազմակերպված «Հավերժի վավերագրողները. Արամ և Արտաշես Վրույրներ» խորագրով ցուցադրությունում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ԳԱԹ, Արամ Վրույրի ֆոնդ

ԳԱԹ, Արտաշես Վրույրի ֆոնդ

Գրականություն

ՎՐՈՒՅՐ 1964 - Վրույր Արտ., Անիում, Երևան, Հայպետհրատ, 1964

ՓԱՇԱՅԱՆ 1963 - Փաշայան Ռ., Արամ Վրույր (կյանքը և բեմական գործունեությունը), Երևան, 1963

ՓԱՇԱՅԱՆ 1989 - Փաշայան Ռ., Արամ և Արտաշես Վրույրներ, Երևան, 1989

Պարբերական մամուլ

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ» 1966-«Հայրենիքի ձայն» թերթ, Երևան 1966, 26 հունիսի, թիվ 26 (48)

«ՀԱՅՐԵՆԻՔԻ ՁԱՅՆ» 1982-«Հայրենիքի ձայն» թերթ, Երևան 1982, 10 մարտի, թիվ 11 (867)

«ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ» 1967-«Պատմա-բանասիրական հանդես», հանդես, 1967, թիվ 4

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» 1971-«Սովետական գրականություն» ամսագիր, 1971 թիվ 12

Հապավումներ

ԳԱԹ - Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

Marine Haroyan

Scientific Secretary

Y. Charents Museum of Literature and Arts

marineharoian@gmail.com

THE CITY OF ANI IN ARTASHES AND ARAM VRUYR MANUSCRIPT HERITAGE

Keywords: Aram Vruyr, Artashes Vruyr, personal archive, Ani expedition.

The personal archives of Aram and Artashes Vruyr are preserved at the Y. Charents Museum of Literature and Art.

Aram Vruyr (1863-1924) was not only active in the theatre but also was engaged in archaeological photography. From 1903 to 1917, as student of the photographer Hovhannes Kyurkchyan, he participated in the Ani expeditions led by Nikolay Marr. Notably, with his direct involvement, the ruins of Ani's Cathedral of Gregory the Illuminator (Gagkashen) were discovered in 1905.

Aram Vruyr's personal archive is divided into five sections, encompassing his literary works, translations, articles, studies, correspondence, biographical documents, brochures, programs, photographs, and personal belongings. This extensive collection, consisting of about 1,500 items, includes numerous unpublished documents related to Ani. Among these are notebook notes, lists of negatives, and announcements of lectures about the city. Particularly memorable are the letters from Nikolay Marr.

Aram Vruyr's sons also made significant contributions to archaeology, particularly in the development of documentary photography. The eldest son, Ara (1896-1943), joined scientific expeditions with his father from a young age and photographed the khachkars of Jugha. Artashes Vruyr (1897-1987) made the most substantial contributions to archaeology and the documentation of historical monuments. He participated in scientific expeditions led by N. Marr, H. Orbeli, B. Piotrovsky, N. Tokarsky, and S. Barkhudaryan. In 1964, he published a memoir entitled “In Ani”.

Artashes Vruyr's personal archive contains 800 documents, many of which have never been published and are related to Ani. Particularly valuable are his memoirs about the Ani expedition and his father, Aram Vruyr, as well as his correspondence with H. Orbeli, N. Marr, and N. Tokarsky.

In addition to the personal archives, the Museum of Literature and Art also houses a substantial collection of photographs of historical monuments taken by Aram, Ara, and Artashes Vruyr. Among these are approximately 100 photographs of Ani's monuments, some of which were exhibited in 2022 at the History Museum of Armenia, in the joint exhibition with Y. Charents Museum of Literature and Arts entitled “Documenting the Eternal: Aram, Ara and Artashes Vruyrs”.

Марине Ароян

ученый секретарь
Музей литературы и искусства имени Е. Чаренца

marineharoian@gmail.com

АНИ В РУКОПИСНОМ НАСЛЕДИИ АРАМА И АРТАШЕСА ВРУЙРОВ

Ключевые слова: Арам Вруйр, Арташес Вруйр, личный архив, экспедиция Ани, Никола́й Марр, Никола́й Токарский.

Личные архивы Арама и Арташеса Вруйров хранятся в Литературно-художественном музее им. Е. Чаренца.

Известно, что Арам Вруйр (1863-1924) наряду со своей сценической деятельностью занимался и археологической фотографией. Он был учеником фотографа Ованеса Кюркчяна и в 1903-0917 гг. участвовал в экспедиции Ани под руководством Марра. При его непосредственном участии были обнаружены руины собора Григория Просветителя (Гагкашен) в Ани (1905 г.).

Пять разделов личного архива Арама Вруйра содержат его литературные произведения, переводы, статьи, исследования, написанные и полученные им письма, документы, связанные с его биографией, а также брошюры, программы, фотографии и личные вещи. В этой коллекции, насчитывающей около 1500 единиц, также собрано множество различных документов, связанных с Ани: тетрадные записи, списки негативов, анонсы лекций, прочитанных о городе Ани. Особенно запомнились письма Н. Марра.

Сыновья Арама Вруйра также внесли большой вклад в развитие археологии и археологической фотографии. Старший сын Ара (1896-1943) с юных лет вместе с отцом участвовал в научных экспедициях, фотографировал хачкары Джуги. Наибольший вклад в область археологии и документирования исторических памятников внес Арташес Вруйр (1897-1987). Он участвовал в научных экспедициях Н. Марра, Ов. Орбели, Б. Пиотровского, Н. Токарского и С Бархударяна. 1964 году он опубликовал мемуары «В Ани».

В личном архиве Арташеса Вруйра насчитывается 800 документов, среди них много уникальных документов, связанных с Ани. Особенно ценны его воспоминания об Анийской экспедиции Марра также переписка с Марром, Н. Токарским, К. Тревером, А. Якобсоном.

Помимо личных архивов, в Музее литературы и искусства хранится большая коллекция фотографий исторических памятников сделанных Арамом, Ара и Арташесем Вруйров, среди которых около 100 фотографий памятников Ани, часть из них в 2022 году была выставлена в музее Истории Армении в Экспозиции «Документирующие вечность: Арам, Ара, Арташес Вруйры», организованная совместно с музеем искусства и литературы имени Е. Чаренца.